# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15
# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

**գ. Փարաքար** **26.03.2025թ.**

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի վարչական շենքում տեղի է ունեցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստ, հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Կարապետ Արթենյանի, հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Սիմոնյանի, հանձնաժողովի անդամներ՝ Ժանետա Գասպարյանի, Արմեն Վեզիրյանի, Պապ Գևորգյանի:

Հանձնաժողովի նիստին ներկա էր նաև դիմումատու Սևակ Հովհաննեսի Խլղաթյանը /ծնված՝ 1958 թվականի հուլիսի 30-ին, անձնագիր AL 0420050, տրված 2023 թվականի սեպտեմբերի 07-ին 043-ի կողմից/, հաշվառման հասցե Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք ք. Մարտունի Մոմճյան փողոց տուն 20 հասցեում, փաստացի բնակության հասցե Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք Վերին Գետաշեն բնակավայրի Ա թաղամաս 3-րդ փողոց տուն 2 հասցեում, նրա փաստաբան՝ Յուրի Դոլուխանյանը /վկայական N 1799/, Փարաքար համայնքի իրավաբանական բաժնի պետ՝ Մելանյա Կոստանյանը:

## *ՕՐԱԿԱՐԳՈՒՄ*

ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք ք. Մարտունի Մոմճյան փողոց տուն 20 հասցեում հաշվառված, փաստացի բնակության հասցե ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնք Վերին Գետաշեն բնակավայրի Ա թաղամաս 3-րդ փողոց տուն 2 հասցեի բնակիչ Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի 2025 թվականի փետրվարի 03-ի թիվ 0458 դիմումի քննարկումն է՝ իր քրոջ՝ ՀՀ Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Մերձավան Երևանյան խճուղի 2-րդ փողոց 6-րդ շենք բնակարան 3 հասցեի բնակչուհի՝ Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի /ծնված 1946 թվականի դեկտեմբերի 09-ին անձնագիր AV 0674364, տրված 2023 թվականի մարտի 15-ին 057-ի կողմից/ նկատմամբ խնամակալ նշանակելու վերաբերյալ:

Դիմումատուն դիմումին կից ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

1. Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի անձնագրի և ՆՔՆ պատճենները

2. Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի անձնագրի և ՆՔՆ պատճենները
3. Տեղեկանք՝ ընտանիքի անդամների հաշվառման վերաբերյալ
4. Տեղեկանք՝ Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի փաստացի բնակության վայրից
5. Տեղեկանք Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի հաշվառման վերաբերյալ
6. Համաձայնագիր Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի կնոջ՝ Լիաննա Տաճատի Ավետիսյանից
7. Լիաննա Տաճատի Ավետիսյանի անձնագրի պատճենը
8. Քաղվածք Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի ամբուլատոր բժշկական քարտից
9. Անժելա Հովհաննեսի Խլղաթյանին անգործունակ ճանաչելու մասին վճիռը
10. Տեղեկանք Սևակ Խլղաթյանի աշխատավարձի չափի վերաբերյալ
11. Հայտարարություն Արման Խլղաթյանից
12. Արման Խլղաթյանի անձնագրի պատճենը
13. Հայտարարություն Աhարոն Խլղաթյանից
14. Աhարոն Խլղաթյանի անձնագրի պատճենը
15. Լիազորագիր՝ տրված Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի կողմից լիազոր անձ՝ Յուրի Դոլուխանյանին
16. Յուրի Դոլուխանյանի վկայականի պատճենը

*Զեկուցող*՝ Կ.Արթենյան

**Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ**

Անժելա Հովհաննեսի Խլղաթյանը /ծնված 1946 թվականի դեկտեմբերի 09-ին անձնագիր AV 0674364, տրված 2023 թվականի մարտի 15-ին 057-ի կողմից/ ունի հոգեկան առողջության խնդիրներ, թիվ ԱՐԴ1/3538/02/19 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ապրիլի 30-ի վճռով՝ Անժելա Հովհաննեսի Խլղաթյանը ճանաչվել է անգործունակ:

Հանձնաժողովը՝ գործի օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրության նպատակով, պահանջել է Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի որդիներ՝ Աhարոն և Արման Վահանի Խլղաթյանների համաձայնությունը՝ մոր նկատմամբ մորեղբոր՝ Սևակ Հովհաննեսի Խլղաթյանին խնամակալ նշանակելու վերաբերյալ: Աhարոն և Արման Վահանի Խլղաթյանները տվել են իրենց գրավոր համաձայնությունը:

Սևակ Հովհաննեսի Խլղաթյանը հայտնեց, որ պարտավորվում է պատշաճ ձևով իրականացնել իր քրոջ՝ Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի խնամքը: Նա հայտնեց, որ երկար տարիներ ինքն է զբաղվում իր քրոջ խնամքով, քանի որ տղաներից մեկը՝ Ահարոնը բնակվում է արտերկրում, իսկ մյուս տղան՝ Արմանը ապրում է առանձին և չի կարող խնամել իր մորը: Արման Խլղաթյանը ևս հաստատեց, որ չի կարող զբաղվել մոր խնամքով: Սևակ Հովհաննեսի Խլղաթյանը հայտնեց, որ մեկ ամսվա ընթացքում պետք է տեսախցիկներ տեղադրի Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի բնակարանում և վարձի բուժքույր, ով կհետևի Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի առողջական վիճակին:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ կետի խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականությունները անպատշաճ կատարելու՝ ներառյալ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում, խնամակալության ու հոգաբարձության մարմինը կարող է խնամակալին կամ հոգաբարձուին ազատել այդ պարտականությունների կատարումից և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրան՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար:

**Հանձնաժողովը որոշեց՝**

Առաջարկել խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի /ծնված 1946 թվականի դեկտեմբերի 09-ին անձնագիր AV 0674364, տրված 2023 թվականի մարտի 15-ին 057-ի կողմից/ նկատմամբ խնամակալ նշանակել եղբորը՝ Սևակ Հովհաննեսի Խլղաթյանին /ծնված՝ 1958 թվականի հուլիսի 30-ին, անձնագիր AL 0420050, տրված 2023 թվականի սեպտեմբերի 07-ին 043-ի կողմից/:

Հսկողություն սահմանել Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի գործողությունների նկատմամբ:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ ____________ Կ. Արթենյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Լ. Սիմոնյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Ժ. Գասպարյանի

____________ Ա. Վեզիրյան

____________ Պ. Գևորգյան

ՆԱԽԱԳԻԾ

*ՄԱՐՏ 2025թ.*

# ԱՆԺԵԼԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԽԼՂԱԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի ապրիլի 30-ի ԱՐԴ1/3535/02/19 քաղաքացիական գործով վճիռը, Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի քաղաք Մարտունի Մոմճյան փողոց տուն 20 հասցեի բնակիչ Սևակ Հովհաննեսի Խլղաթյանի /ծնված՝ 1958 թվականի հուլիսի 30-ին, անձնագիր AL 0420050, տրված 2023 թվականի սեպտեմբերի 07-ին 043-ի կողմից/ 2025 թվականի փետրվարի 03-ի թիվ 0458 դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի մարտի 26-ի 09 նիստի թիվ 15 արձանագրությունը. **Որոշում եմ՝**

1. Սևակ Հովհաննեսի Խլղաթյանին /ծնված՝ 1958 թվականի հուլիսի 30-ին, անձնագիր AL 0420050, տրված 2023 թվականի սեպտեմբերի 07-ին 043-ի կողմից/ նշանակել խնամակալ իր քրոջ՝ ԱՐԴ1/3538/02/19 քաղաքացիական գործով 2024 թվականի ապրիլի 30-ի վճռով անգործունակ ճանաչված Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի /ծնված 1946 թվականի դեկտեմբերի 09-ին անձնագիր AV 0674364, տրված 2023 թվականի մարտի 15-ին 057-ի կողմից/ նկատմամբ:
2. Սևակ Հովհաննեսի Խլղաթյանին վերապահել իրավունք ի շահ ՝խնամարկյալի, առանց հատուկ լիազորության հանդես գալ իր խնամարկյալի իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3. Հսկողություն սահմանել Անժելա Հովհաննեսի Խլղաթյանի /ծնված 1946 թվականի դեկտեմբերի 09-ին անձնագիր AV 0674364, տրված 2023 թվականի մարտի 15-ին 057-ի կողմից/ եղբոր՝ Սեակ Հովհաննեսի Խլղաթյանի /ծնված՝ 1958 թվականի հուլիսի 30-ին, անձնագիր AL 0420050, տրված 2023 թվականի սեպտեմբերի 07-ին 043-ի կողմից/ գործողությունների նկատմամբ:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ Վարչական դատարան:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

1. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարի խորհրդականի ժամանակավոր պաշտոնակատար
2. Իրավաբանական բաժին
3. Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժին